

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-----2012 թվականի N - Ա

ՇՈՒԿԱՅԻՑ ՊԱՏՐԱՍՏԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ/ԲՆԱԿԱՐԱՆ/ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> N 711-Ն որոշման՝ 1-ին կետի 10-րդ ենթակետով հաստատված N 10 հավելվածի 3-րդ կետը, և 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գոշ, Աչաջուր և Գետահովիտ գյուղերի սողանքային գոտիներից առաջնահերթ վերաբնակեցման ենթակա 9 բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծել անհատույց պետական ֆինանսական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) տրամադրման և շուկայից բնակելի տուն /բնակարան/ ձեռք բերելու միջոցով համաձայն հավելվածի (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ կապիտալ դրամաշնորհներ>> հոդվածով):

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված աջակցությունը տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> N 711-Ն որոշման 4-րդ և 5-րդ կետերով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված  
 ՀՀ կառավարության 2012 թվականի  
 ----- N ----- որոշման

NN ը/կ	Ազգանուն, անուն, հայրանուն	Համայնքի անվանումը	Տրամադրվող աջակցության չափ /հազ.դրամ/	Ընտանիքի անդամների թիվը
1.	Բաբինյան Աշոտ Հայկազի	գ. Գոշ	7,162,0	9
2.	Գրիգորյան Սիմոն Հրանտի	գ. Գոշ	4,833.0	5
3.	Գրիգորյան Սերիկ Բալաբեկի	գ. Գոշ	4,833.0	4
4.	Դավթյան Վարդուշ	գ. Գոշ	4,833.0	5
5.	Հովսեփյան Արծրուն Սերյոժայի	գ. Գոշ	4,833.0	5
6.	Սարգսյան Սիրան Բարսեղի	գ. Գոշ	5,577,0	6
7.	Վերանյան Սենիկ Հովսեփի	գ. Գոշ	5,577,0	6
8.	Սարգսյան Արմեն Շավարշի	գ. Աջաջուր	7,162,0	8
9.	Ղազարյան Վալերիկ Վալդի	գ. Գետահովիտ	5,577,0	7
	<b>ընդամենը</b>		<b>50,387,0</b>	

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

<<ՇՈՒԿԱՅԻՑ ՊԱՏՐԱՍԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ/ԲՆԱԿԱՐԱՆ/ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ  
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

<<Շուկայից պատրաստի բնակելի տուն/բնակարան/ ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը /այսուհետ՝ Որոշում/ մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության նախագահի 2008 թվականի հուլիսի 30-ի ՆԿ-128-Ա կարգադրության /2008թվականի հունվարի 10-ից փետրվարի 17-ը մարզեր կատարած այցելությունների ընթացքում հրատապ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ժամանակացույց/, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի՝ մայիսի 27-ի N 01/16/3184-10 և 31-ի N 01/15/3203-10, 2011 թվականի հոկտեմբերի 26-ի N 01/15/6809-11 և 2012թվականի փետրվարի 2-ի N 01/15/464-12 հանձնարարականների համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզի Գոշ, Աչաջուր և Գետահովիտ համայնքներում սողանքային առավել վտանգավոր գոտում հայտնված բնակելի տների բնակիչների տարահանման և նրանց բնակարանային խնդիրների լուծման նպատակով:

### 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

ՀՀ Տավուշի մարզի Գոշ գյուղի սողանքային վտանգավոր գոտու ակտիվացման հետևանքները, ՀՀ քաղաքաշինության նախարարի 07.06.2010թ. թիվ 68 հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից /որի կազմում է նաև <<Սեյսմակայուն շինարարության և կառուցվածքների պահպանման հայկական ԳՀ>> ԲԲԸ մասնագետը/ ուսումնասիրվել և կազմվել է համապատասխան եզրակացություն: Արդյունքում՝ 7 բնակելի տներ ունեն վնասվածության տարբեր աստիճաններ /4-ը 4-րդ, իսկ 3-ը 3-դ աստիճան/, երեք ընտանիք վերաբնակեցվել են:

Աչաջուր գյուղի 1 բնակելի տուն 2010 թվականից կիսաքանդ վիճակում է՝ բնակիչները վերաբնակեցված: Նշված սողանքային վտանգավոր գոտու որոշ տնատերերի՝ դեռևս 1997 թվականին, տրամադրվել է անհատույց պետական ֆինանսական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) իրենց բնակարանային ապահովության խնդիրները լուծելու նպատակով:

Գետահովիտ գյուղի սողանքային գոտու խիստ ակտիվացման հետևանքով 2011թվականին հրատապ վերաբնակեցվել է 1 ընտանիք: Նշված համայնքում սողանքային գոտու ակտիվացումը նկատվել է 1995-1996 թվականներին: Վեց ընտանիքներ, 1997-1998թվականներին տարահանվել և ստացել են աջակցություն՝ իրենց ընտանիքների բնակարանային ապահովության խնդիրների կարգավորման նպատակով:

Կարևորելով Գոշ, Աչաջուր և Գետահովիտ համայնքների սողանքային երկույթների ակտիվացման հետևանքով, առավել վտանգավոր գոտիներում գտնվող 9 բնակելի տների բնակիչների անվտանգության ապահովման և վերաբնակեցման խնդիրը՝ հարցը կրկին ուսումնասիրվել է և հիմք ընդունելով վերը նշված հանձնարարականները մարզպետարանի կողմից առաջարկվել է այն լուծել մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների կարգավորման համար ընթացիկ տարվա 3-րդ եռամսյակում տրամադրված ֆինանսական միջոցների հաշվին՝ որը և հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի

Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»» N 711-Ն որոշմամբ/հավելված N 10/:

«Քաղաքաշինության, արտակարգ իրավիճակների նախարարությունների և մարզպետարանի համապատասխան մասնագետների կողմից ուսումնասիրությունների արդյունքում տրվել է միանշանակ եզրակացություն՝ բնակիչներին անհապաղ տարահանման մասին: Վերաբնակեցման ենթակա բնակելի տան սեփականատերերին տրամադրվող աջակցության չափի հաշվարկման հիմք է հանդիսացել բնակելի տանը հաշվառված և բնակվող ընտանիքի անդամների թվաքանակը:

Որոշման ընդունման նպատակը՝ 9 ընտանիքների բնակարանային խնդիրների կարգավորումն է:

## 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Որոշման նախագծով առաջարկվում է ՀՀ Տավուշի մարզի Գոշ, Աչաջուր և Գետահովիտ համայնքների առավել վտանգավոր գոտում հայտնված բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծել շուկայից պատրաստի բնակելի տուն (բնակարան) ձեռք բերելու տարբերակով՝ բնակիչներին աջակցություն տրամադրման միջոցով, Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին տրամադրված 50,387.0 հազար դրամ գումարի հաշվին:

Պարտադիր պայման է սողանքային գոտում գտնվող բնակեցումից ազատված բնակելի տան քանդումը և սահմանված կարգով աջակցությամբ ձեռք բերված բնակելի տան /բնակարանի/ գույքային իրավունքների պետական գրանցումից հետո քանդված տանը կից տնամերձ հողամասի փոխադրումը պետական սեփականության պահուստային հողերի կատեգորիա:

Ընտանիքների համար նախատեսված գումարի չափը հաշվարկվել է ելնելով՝ ՀՀ Տավուշի մարզի բնակավայրերում 2011թ. 4-րդ եռամսյակի դրությամբ անհատական բնակելի տների առավաճառքի գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ընդհանուր մակերեսի 1քառ.մետրի համար ձևավորված շուկայական միջին գնից /74.36 հազ.դրամ/, և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 24-ի թիվ 309-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ պարբերությամբ և 9՝ կետով սահմանված նորմերից՝ ընտանիքի 4 կամ 5 անդամների համար նախատեսվող 3 սենյականոց բնակարանի՝ 65քառ.մ, 6-7 անդամների համար նախատեսվող 4 սենյականոց բնակարանի՝ 75քառ.մ, իսկ 8-9 հոգանոց ընտանիքի անդամների համար՝ 96,3քմ մակերեսի չափերից:

Աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի «Բնակարանային կառուցման և բնակարանային խնդիրների առաջնահերթ լուծման մասին»» N 845-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան:

## 2. Կարգավորման առարկան.

«ՀՀ Տավուշի մարզի Գոշ, Աչաջուր և Գետահովիտ համայնքների սողանքային առավել վտանգավոր գոտիներում գտնվող 9 բնակելի տների բնակիչների վերաբնակեցման հետ կապված հարցերի կարգավորումն է:

## 3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է ՀՀ Տավուշի մարզի Գոշ, Աչաջուր և Գետահովիտ համայնքների սողանքային առավել վտանգավոր գոտիներում գտնվող 9 բնակելի տների բնակիչների վերաբնակեցմամբ լուծել նրանց անվտանգության խնդիրը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՇՈՒԿԱՅԻՑ ՊԱՏՐԱՍՏԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ/ԲՆԱԿԱՐԱՆ/ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Շուկայից պատրաստի բնակելի տուն/բնակարան/ ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՇՈՒԿԱՅԻՑ ՊԱՏՐԱՍՏԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ/ԲՆԱԿԱՐԱՆ/ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

<<Շուկայից պատրաստի բնակելի տուն/բնակարան/ ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնում: